

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 15/4

9 սեպտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Մարինե Հարությունյանի 05.08.2014 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 05.06.2014 թ-ի թիվ 580 որոշման դեմ:

Մարինե Հարությունյանի բողոքում բերված փաստարկները.

Նոր Նորքի ՀՏ պետի 2014 թվականի հունիսի 5-ի թիվ 580 որոշմամբ Մարինե Հարությունյանից պետք է գանձվի 376.396 դրամ: Հաշվարկը կատարվել է սկսած 1998 թվականից:

Մարինե Հարությունյանը հայտնում է, որ որոշումը անհիմն է հետևյալ պատճառաբանությամբ.

1) ԱՁ Մարինե Հարությունյանը ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացնում, որի մասին վաղուց համապատասխան դիմում է ներկայացվել հարկային տեսչություն: Դիմումը պետք է առկա լինի հարկային գործի մեջ:

2) Վերոգրյալ որոշումը կայացվել է «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30.1 հոդվածով նախատեսված երեք տարվա ժամկետի խախտմամբ:

Ելնելով վերոգրյալից ԱՁ Մարինե Հարությունյանը խնդրում է վերացնել Նոր Նորքի ՀՏ պետի 2014 թվականի հունիսի 5-ի թիվ 580 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց է, որ Մարինե Հարությունյանը որպես անհատ ձեռներեց պետական գրանցում է ստացել 03.03.1995 թ-ին: Այնուհետև, 03.09.1996 թ-ին հաշվառվել է հարկային մարմնում և մինչ օրս գործունեությունը չի դադարեցրել (չի լուծարվել):

Ա/Ձ Մարինե Հարությունյանի պարտավորություններն բաղկացած են 2009 թ-ի հունվարից մինչև 2012 թ-ի դեկտեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածում չվճարված նվազագույն սոցիալական ապահովության վճարներից և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերից՝ գումարով 371.396 դրամ, ինչպես նաև 1998 թ-ի հունիս-օգոստոս ամիսների հաստատագրված վճարի գումարը սահմանված ժամկետում չվճարելու համար հաշվարկված տույժից՝ գումարով 5000 դրամ:

Ելնելով վերոգրյալից ՀՀ ԿԱ ՊԵԿ Նոր Նորքի ՀՏ պետի կողմից 2014 թ-ի հունիսի 5-ին ընդունվել է թիվ 580 որոշումը Ա/Ձ Մարինե Հարությունյանից 376.396 դրամ գանձելու վերաբերյալ:

Նշվեց նաև, որ Ա/Ձ Մարինե Հարությունյանը 28.07.1998 թ-ին հարկային տեսչություն ներկայացրել է հայտարարություն, որով հայտնել է, որ 1998 թ-ի օգոստոսի 1-ից դադարեցնում է գործունեությունը և սկսելու դեպքում պարտավորվում է տեղյակ պահել: Սակայն Ա/Ձ Մարինե Հարությունյանի կողմից գործունեությունը դադարեցնելու վերաբերյալ դիմում ներկայացնելու հանգամանքը չէր կարող հիմք հանդիսանալ նվազագույն սոցիալական ապահովության վճարների չհաշվարկման համար: Մասնավորապես, «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքի (մինչև 31.12.2012 թ-ը գործող խմբագրություն) 5-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն, անհատ ձեռնարկատերերը

պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար վճարել նվազագույն սոցիալական վճար՝ 5000 դրամի չափով, մինչև հաջորդ ամսվա 15-ը: Ընդ որում՝ պետական գրանցման վկայականը ժամանակավոր հարկային մարմին հանձնած (մինչև 25.07.2012 թ-ը) և այդ ժամանակահատվածում ձեռնարկատիրական գործունեություն չիրականացրած անհատ ձեռնարկատերը նվազագույն սոցիալական վճարներ չի կատարում՝ վկայականը հանձնելուն հաջորդող ամսվանից մինչև վկայականը հետ ստանալու ամիսն ընկած ժամանակահատվածի համար:

Դա նշանակում է, որ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին հանձնած չլինելու դեպքում անհատ ձեռնարկատերը պարտավոր էր վճարել 5000 դրամ նվազագույն սոցիալական վճար՝ անկախ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու կամ չիրականացնելու հանգամանքից:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Մարինե Հարությունյանի կողմից պետական գրանցման վկայականը ժամանակավորապես հարկային մարմին չի հանձնվել, ինչը և հիմք է հանդիսացել նվազագույն սոցիալական վճարի գծով պարտավորությունների հաշվարկման համար:

Ինչ վերաբերվում է բողոքում բերված այն պնդմանը, որ Նոր Նորքի ՀՏ պետի 05.06.2014 թ-ի թիվ 580 որոշումը կայացվել է «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով նախատեսված՝ երեք տարվա ժամկետի խախտմամբ, ապա այդ կապակցությամբ հարկ է նշել, որ բողոքաբերի նշված պնդումը հիմնավոր չէ, քանի որ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1-րդ հոդվածով սահմանված երեք տարվա ժամկետը վերաբերվում է հարկային օրենսդրության խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորությունների առաջացմանը, ինչը քննարկվող դեպքին չի կարող առնչվել: Բացի այդ, Ա/Ձ Մարինե Հարությունյանին գրավոր ծանուցվել է «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքով սահմանված արտոնություններից օգտվելու մասին: Ծանուցագիրը նրա կողմից ստացվել է 29.06.2011 թ-ին:



Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 05.06.2014 թ-ի թիվ 580 որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Նոր Նորքի ՀՏ պետի 05.06.2014 թ-ի թիվ 580 որոշումը թողնել անփոփոխ:
Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ